էլ այն է, որ յղի կանանց վրա կարևոր խնամք և պէտք եղած հոգ չեն տանում, ինչպէս որ հարկն է։ Ցղի կինը (իմա 15—16 տարեկան) նոյն իսկ իւր յղութեան վերջին 8—9-րդ ամիսներին աշխատաւոր եղան պէս բանում է այնպէս, ինչպէս որ ընտանիքի միւս անդամներն են աշխատում։ Այսինքն՝ աղբիւրից կամ գետից, կուժն ուսին, նա ջուր է կրում, շատ անգամ բորիկ ոտքով, ոռոով սաստիկ խոնաւութիւնից նա ստանում է յօդացաւ և ուրիշ հիւանդութիւններ։ Մետաքսի որդերին կերակրելիս, շալակով թթենու թարմ ոստեր, մրգեղէնների քաղելու միջոցին՝ մրգերով լի զամբիւղներ և այլ ծանրութիւններ կրելով, յղի կանայք մասամբ վիժում են և մասամբ էլ ստանում են մէջքի և ողնաշարի թուլութիւն։ Իսկ ծննդաբեր կանանց վիճակը աւելի քան ողբալի է։ Երկունքի ցաւն սկսուելուն պէս, դժբախտ յղի կնոջը ձգում են մի մութ ու խոնաւ գոմի մէջ, ուր մաքուր օդ չկայ, ուր լոյս չկայ, որպէսզի ծննդաբերութեան պատճառով իրենց սովորական բնակարանը, իբր թէ, չհարամուի (չապականուի)։ Այդ գոմի մէջ հաւաքւում են տան անդամներից սկեսուրը (բիանան), տատմէրը (մանկաբարձուհի) —հարևաններ և բարեկամ կանայք, որոնք հազար ու մի տեսակ տանջանքներ տալով թշուառ հարսին, կամ երկունքից ազատում են նրան մի կերպ կիսամեռ վիճակի մէջ և կամ իւր նորածին զաւակի հետ ուղարկում են դէպի միւս անանց աշխարհը։ Ամբողջ Նուխու գաւառում շատ դժուար է բժիշկ գտնել, եղածն էլ ապրում է այնտեղ,